ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«07» 05 2025 թ. Թիվ 120-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 173-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի «Գաղտնի քննչական գործողությունների, կապի օպերատորներին ներկայացվող տեղեկատվության պահանջի կատարման կազմակերպման կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 116-Լ և 2021 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 149-Լ հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 173-Լ հրամանի N 1 հավելվածի 3-րդ կետում «վարչության» բառից հետո լրացնել «, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության» բառերը:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին,

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և առաջին բաժնի պետին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ